

ՆԱՍԱԿՆԵՐ ԵՐԿՐԻՑ

Նամակ 132

Վահագն Գուրպաղեանի մասին

Միրելի բարեկամ,
 Ես ներքին մեծ բաականությամբ եւ ուղղակի հաճոյքով եմ գրում այս տողերը, որովհետեւ երբ խօսում կամ գրում եմ լաւ բաների, գեղեցիկ երեւոյթների, առաւել եւս՝ հրաշալի մարդկանց մասին, իրօք բաականութիւն է եւ հաճոյք: Այսօր ես քեզ ուզում եմ ծանօթացնել մի փառահեղ մարդու, տաղանդաւոր գիտնականի եւ ընտիր մտաւորականի: Մեր մէջ ասած,- դէս-դէն մի ասա, ամէն մարդու մի պատմիր,- ես կարտ եմ իր հետ իմ ընկերութեամբ եւ բարեկամութեամբ:

Վահագն Գուրպաղեանը գիտնական է եւ շատ մեծ գիտնական է: Այսօր նա Հայաստանում Կոստանտնուպոլիսի եւ աստղաֆիզիկայի ղեկավարն է: Իր կեանքի ուղին շատ հարուստ եւ հետաքրքրական է:

Վահագն Գուրպաղեանը իր մասնագիտական կրթութիւնը ստացել է Մոսկուայում, աշակերտելով շատ մեծ գիտնականների, խորհրդային միջուկային վեճի հեղինակներից Նոբելեան մրցանակի դափնեկիր Վիտալի Գինկբուրգին եւ շատ նշանաւոր Յակով Չելոպիչին: Դեռեւս 1979 թուականին Գինկբուրգը դիմում է Միջազգային աստղագիտական միութեան նախագահին խնդրելով 23-ամեայ Վահագն Գուրպաղեանին հրաւիրելու Գլխաւոր ասամբլեայում ելոյթ ունենալու: Համբաւոր Nature գիտական ամսագիրը հրապարակում է երիտասարդ գիտնականի աշխատութիւնը: Դու գիտես, որ մեզանում գիտական երկու աստիճան կայ՝ գիտութիւնների թեկնածու եւ գիտութեան դոկտոր: Թեկնածու դառնալը արդէն դիրքն է: Եւ այնուամենայնիւ արդէն գիտութիւնների թեկնածու Վահագն Գուրպաղեանը երեսուներկու տարեկանում դառնում է գիտութիւնների դոկտոր:

Սկսում է նրա մեծ ընթացքը: 1989 թուականին նա դասախօսութիւններ է կարդում Ճապոնիայի չորս համալսարանում: Դրանից յետոյ հրաւիրեալ փրօֆեսոր Վահագն Գուրպաղեանը աշխատում է օտարերկրեայ մի շարք համալսարաններում, այդ թում՝ Մասեքսի (Մեծ Բրիտանիա) եւ 2001 թուականից Հոուսի Լա Սոպիենցիա՝ համալսարանում:

Վահագն Գուրպաղեանը քանիցս մասնակցել է միջազգային շատ պատուաւոր գիտաժողովների: 2000 թուականին նա մասնակցել է 22-րդ Մովլէյի ֆիզիքայի գիտաժողովին: Ի դէպ, 1911 թուականից սկիզբ առնող այս համալսարանը գիտաժողովներին հայ գիտնականներից մասնակցել է միայն Վիկտոր Համբարձումեանը: 2012 թուականին տիեզերքի հետազոտութեան առաջնահերթութիւններին նուիրուած շուէյարական գիտութեան 9-րդ բիենալէի երկու գլխաւոր բանախօսներից մէկը եղել է Վահագն Գուրպաղեանը:

Հիմա մի շատ բարդ, շատ դժուար, ասեմ քեզ՝ ինչ համար էլ անհասկանալի նախադասութիւն եմ գրելու: Վահագն Գուրպաղեանի հետազոտութիւնները վերաբերում են գալակտիկական միջուկներում սեւ խողովների ակրեյիային, աստղային համակարգերում քաօսային երեւոյթներին, տիեզերական մնացորդային ճառագայթման յատկութիւններին եւ տիեզերքում ցածր խտութեան հսկայական տիրոյթների բացայայտմանը: Նա առաջարկել է տեղեկատուական պանսպերմիայի վարկածը, ինչը համարուել է Ֆերմիի պարադոքսի հնարաւոր լուծում: Ըստ Վահագն Գուրպաղեանի վարկածի՝ տիեզերական ազդանշաններով հնարաւոր է փոխանցել կեանքի հիմնարար տարրերի գենոմի վերաբերեալ սեղմ կոդաւորուած տեղեկութիւն:

Ըստ հասկացար: Մեզ համար մաքուր չինարէն է, չէ՞: Աւելի լաւ է՝ դա չշարունակեմ, բայց ասեմ, որ Վահագնը ներկայումս եւրոպական արբանեակային ծրագրերից մէկի ղեկավար կազմի մէջ է: Գիտնականները արբանեակ են արշակում Եւրոպական տիեզերական գործակալութեան Կուրու կայանից (Ֆրանսիական Գվիանա):

Վահագն Գուրպաղեանը լայն հետաքրքրութիւնների տեր անչնաւորութիւն է: Նա համագործակցել է Փարիզի, Հարվարդի, Չիկագոյի հնագետների հետ:

Տիգրան Մեծի յայտնի դրամի պատկերը կար հայ ժողովրդի պատմութեան մեր դարրոյական բոլոր դասագրքերում: Արքայից արքայի թագի վրայ թռչող աստղ կար պատկերուած: Ինչքան էր կար ենք նայել ու դիտել: Բայց ահա Վահագն Գուրպաղեանն է կարողացել ուշադրութիւն հրաւիրել դրա վրայ, գիտականօրէն ապացուցելով այն նոյնպէս: Եւ Հալէի նշանաւոր գիտաւորի հետ: Գիտական այս յայտնագործութիւնը վիթխարի դեր է խաղացել իմ աշխարհի պատմութեան ժամանակագրութեան մէջ շատ կարեւոր եւ նշանակալից ժամանակային ճշտումներ կատարելու գործում: Այսօր աշխարհի բազմաթիւ հանրագիտարաններում այդ յայտնագործութիւնը արձանագրուած է:

Միտոս որ հնարաւորութիւն չկայ իր գոնէ շատ կարեւոր ու գլխաւոր գիտական աշխատութիւններն ու հրապարակումները թուարկելու, իր հնագիտական յայտնագործութեան հետ կապուած հրապարակումները նշելու:

Այսքանը գրեցի, որ վերջապէս մօտենամ ամենակարեւոր ասելիքին: Եւ դու կ'իմանա իմ պարզ ու սովորական հայիս հպարտութեան պատճառներից մէկը:

Վահագն Գուրպաղեանը սերտօրէն համագործակցել է մեծանուն գիտնական, անգլիացի ֆիզիկոս եւ մաթեմատիկոս, Լոնդոնի արքայական ընկերութեան անդամ, Օքսֆորդի համալսարանի մաթեմատիկայի ամբիոնի վարիչ Ռոջեր Փենրօուպի հետ:

Անցեալ տարի, մեզ համար շարաղէտ 2020 թուականին Ռոջեր Փենրօուպը արժանապա Նոբելեան մրցանակի: Դեկտեմբերի 8-ին գիտնականը կարդում է իր Նոբելեան դասախօսութիւնը, որի մէջ ամփոփում եւ ի մի է բերում բնագաւառի գրեթէ մէկ դար տեւած ընթացքը: Իր դասախօսութեան մէջ Փենրօուպը խօսում է Վահագն Գուրպաղեանի հետ համագործակցութեան, հայ գիտնականի հետազոտութիւնների կարեւորութեան եւ նշանակալիութեան մասին: Առաջին անգամ շուէյական ակադեմիայի դահլիճում Նոբելեան մրցանակի առիթով տրուում է հայ գիտնականի անուն, այն էլ՝ որոշակի վերաբերմունքով:

Դէ, հիմա ասա, ես, պարզ հայս, չհպարտանամ: Միգուցէ ուրիշ ժողովուրդների, մեծ եւ հզօր պետութիւնների ժողովուրդների համար դա մեծ բան չէ, բայց մեզ համար, մեզ, որ լաւ գիտենք մեր իրականութիւնն ու մեր գիտութեան վիճակն ու մակարդակը, ի հարկէ, մեծ բան է:

Եւ էլ ի մի կարեւոր ու հետաքրքրական իրողութիւն: 2004 թուականին Վահագն Գուրպաղեանը չեռնարկում է մի յանդուգն փորձ՝ բարձրանալ Արարատ լեռան գագաթը, բայց բարձրանալ Դորպատի համալսարանի փրօֆեսոր Ֆրիտրիխ Փարրոթի եւ մեր լուսապայծառ Սաչատուր Աբովեանի վերելքի ճանապարհով: Արարատ լեռան Արարատեան դաշտի դիմահայեայ լանջը խիստ ռազմականացուած տարածք է՝ մուտքի խստագոյն արգելքով: Սակայն Թուրքիայի ռազմական ղեկավարութիւնը, յարգելով Վահագն Գուրպաղեանի գիտական վաստակն ու միջազգային գիտական ճանաչումը, նրան թոյլ է տալիս իրագործելու այդ վերելքը: Այս վերելքի ընթացքում Վահագն Գուրպաղեանը յայտնաբերում է 5-6-րդ դարերի հայկական անյայտ բազիլիկային շինութիւն, ինչպէս նաեւ ասուպի մի անյայտ խառնարան: Այս վերջինի մասին հետազոտութիւն է

Մեր Արուեստագետները - 213

ՄԵՐ ՅՈՎՀԱՆՆԻՄԵԱՆ



Ծանօթ Դեղջ Աշոտ անունով՝ Աշոտ Յովհաննիսեան ծնած է Յունուար 6, 1929ին Մայիսեան գիւղին մէջ: 1943-1947 թուականներուն ուսանած է Լենինականի Մերգուրովի անուան գեղարուեստի դպրոցին մէջ, այնուհետեւ՝ 1948-1950 թուականներուն շարունակած է իր ուսումը Երեւանի գեղարուեստի ուսումնարանին մէջ: 1951ին Կօրակոչուած է Սովետական բանակ զինուորական ծառայութեան համար: 1955ին կը մեկնի Լենինկրատ եւ երկու տարի ետք կ'ընդունուի Սորիերդային Միութեան Գեղարուեստի Սկադեմիայի Իլիա Ռեպինի

անուան գեղանկարչութեան, քանդակագործութեան ինստիտուտը, ուր կը ծանօթանայ արուեստաբան Հենրիկ Իգիթեանին հետ:

1964ին ւարտելով ակադեմիան կը վերադառնայ հայրենիք, ուր ամբողջութեամբ կը նըւիրուի ստեղծագործա-




կան գործունէութեան: 1967ին «Թոնրատուն» աշխատանքով առաջին անգամ կը մասնակցի հանրապետական ցուցահանդէսին եւ այնուհետեւ՝ բոլոր հերթական ցուցահանդէսներուն: 1969ին կը տեղափոխուի Երեւան, ուր կը սկսի որոնումի նոր շրջան մը:

1972ին Երեւանի մէջ բացումը կը կատարուի ժամանակակից արուեստի թանգարանին (Հենրիկ Իգիթեանի ոյժերով), որու մնայուն ցուցադրումին մէջ տեղ կը գտնեն նկարիչին այդ շրջանի 7 լաւագոյն գործերը: 1976ին պարզելով երկրաչափական ծաւալներու հնարաւորութիւնները եկաւ նոր շեւերու պատ մեկնաբանման:



1977ին կը մասնակցի Փարիզի մէջ կազմակերպուած «Սովետական Հայաստանի 50 նկարիչներու ստեղծագործութիւնը» ցուցահանդէսին եւ 1978ին Լիպպոնի Կիլպենկեան Հիմնադրամի կազմակերպած ժամանակակից նկարիչներու ցուցահանդէսին: Եւ ապա Պուտաբեշտ, Պերլին, Լոնտոն, Ռոխոմ, Երեւան ...: 1990ին կը ստանայ Սորիերդային Հայաստանի վաստակաւոր նկարիչի կոչումը:

1996ին Համաշխարհային Քոնկրէսի նուիրած ՄՍԿի վարգապեման ծրագրի կողմէն կազմակերպուած մրցոյթ-ցուցահանդէսին «Արիւիրք» աշխատանքը կ'արժանանայ առաջին մրցանակի:




Սկարիչին ստեղծագործութիւններուն ոճն ու շեւաբանական լեզուն սերտ կապ ունին եւրոպական մոտեմիկայի, մասնաւորապէս Էքսպրեսիոնիզմի եւ ապստրակտ արուեստի հեղինակաւոր ներկայացուցիչներ՝ Մալեւիչի եւ Փոլ Բլէյի ստեղծագործական մեթոտներու հետ: Սակայն անոր աշխատանքներուն բնորոշ տար գոյները, համադրման տրամադիկ յուպականութիւնն ազգային որոշակի շեշտադրում ունին: Այս է Աշոտ Յովհաննիսեանի արուեստի արմատական կապը ինչպէս



հայկական մանրանկարչութեան, այնպէս ալ Մարտիրոս Մարեանի, Մինաս Աւետիսեանի, Արշիլ Կորքիի ստեղծագործական ժառանգութեան հետ:

Կը մահանայ Երեւան, Յուլիս 12, 1997ին, 68 տարեկանին:



տպագրում քրիտանական աստղագիտական հանդէսում:
 Պահեցի, որ վերջում ասեմ, որ Վահագն Գուրպաղեանը որդին է մեծանուն գիտնական, ուղղակի լեգենդական անհատականութիւն Գրիգոր Գուրպաղեանի: Վահագն Գուրպաղեանը թոռն է նշանաւոր հնագետ-հայագետ Աշխարիբէկ Բալանթարի, որի գիտական աշխատութիւնների ընտրանին երեք հատորով հրատարակուեց Փարիզում «Civilisation de Proshe-Orient» մատենաշարով:
 Միա թէ ինչ է նշանակում ընտանեկան կրթութիւն եւ դաստիարակութիւն, ինչ է նշանակում մտաւորական ընտանիքի ժառանգական ընթացք:
 Ի դէպ, Վահագն Գուրպաղեանի որդին, տակալին երիտասարդ մաթեմատիկոս Արամ Գուրպաղեանը, հասցրել է ստանալ Ռուսաստանի երիտասարդ գիտնականների առաջին մրցանակը եւ ներկայումս աշխատում է Բեմբրիջի համալսարանում (Մեծ Բրիտանիա):
 Գրածս շատ համառօտ եւ կցկտուր եղաւ, բայց յուսով եմ, որ դու ծանօթացար մի հրաշալի մտաւորականի:
 Մնամ
 Վահագն Գուրպաղեանով հիացած ընկերդ՝

Երուանդ Տեր-Սաչատուրեան
 Երեւան